ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության բաժնի ավագ գիտաշխատողի մրցույթ

ՀՀ Կառավարության՝ 2023 թ. դեկտեմբերի 21-ի թիվ 2298-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է ***Արևելյան աղբյուրագիտության և պատմագրության բաժնի 0.5 դրույք ավագ գիտաշխատողի*** մրցույթ:

Մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի տվյալ ստորաբաժանման գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան,

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական՝ առնվազն ութ տարվա աշխատանքային ստաժ,

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հումանիտար գիտություններ մասնագիտություններով ՄԳՇ-ում համահեղինակած առնվազն մեկ հրապարակում կամ մեկ մենագրություն,

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հումանիտար գիտություններ մասնագիտություններով ՄԳՇ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն մեկում որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ,

5) հանդիսանում է վաղ արդի շրջանի հայերեն և պարսկերեն աղբյուրների ուսումնասիրության մասնագետ.

6) տիրապետում է պարսկերենին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ տնօրենի անունով,

2) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

3) ինքնակենսագրություն (CV),

4) լուսանկար 2 հատ,

5) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

6) բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի), գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները,

7) հրատարակված գիտական աշխատությունների և/կամ գյուտերի ցանկը (առկայության դեպքում),

8) հավակնորդի նախաձեռնությամբ գիտական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել **մինչև 2025 թ. նոյեմբերի 13-ը (ներառյալ) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, գիտական քարտուղարին, հեռ. +374 10 583382:**